# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## ՈՐՈՇՈՒՄ

11 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 74-Ա

## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Ռայա Մելքոնյանի հայտը ` **որոշում եմ.**

1.Ռայա Մելքոնյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, համայնք Շնող, բնակավայրԹեղուտ, փողոց 3, հող 6/1 (ծածկագիր՝ 06-037-0019-0023, վկայական թիվ 01092015-06-0017) հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա մառանի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Ռայա Մելքոնյանին `
1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման,
2) կառուցապատման (վերականգնման և ուժեղացման) աշխատանքերն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգի N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. _______________ _____
գ.Շնող

*Ձև N 1-2*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔ

(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 3 11 ապրիլի 2022թ.

Օբյեկտ բնակելի կառուցապատման նպատակային նշանակության հողամասում մառանի կառուցման
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

______
(հակիրճ բնորոշումը, հզորությունը

աշխատանքների______ նախագծային փաստաթղթերի մշակման համար:

ռիսկայնության աստիճան ( ) Աշխատանքային նախագիծ,
ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, համայնք Շնող , բնակավայր Թեղուտ, փողոց 3, հողամաս 6/1 (ծածկագիր՝ 06-037-0019-0023, վկայական 01092015-06-0017)
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող Ռայա Մելքոնյան /հասց.՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Շնող , բնակավայր Թեղուտ, փողոց 3, թիվ 5 հեռ.՝ 077 98-64-88՝
բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը սեփականության վկայական 01092015-06-0017, կառուցապատման հայտ, հողամասի հատակագիծ , էսքիզային նախագիծ
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված

կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը ______
(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է — Բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամաս,
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում,դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը — ծածկագիր 06-037-0019-0023, 0,10557 հա. հող.,
______
(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա)

3. Հողամասի առկա վիճակը — Հողամաս ( 1055,7 քմ)
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները ______
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման,
______

էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր ---------------------------------------------------------------------------------------------------------------

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) -----------------

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ _նախագիծը մշակել՝ համաձայն տրված առաջադրանքի, կառուցապատվող տարածքում սերվիտուտներ չկան

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ ղեկավարվել ՀՀ գործող նորմերին համապատասխան_ըստ միջավայրի պայմանների, հաշվի առնել միջավայրի քաղաքաշինական առանձնահատկությունները, հատակագծային լուծումները ըստ պատվիրատուի առաջադրանքի և՝ ըստ միասնական պահանջներ սահմանող ուղեցույցի, կառուցվող նախագծի վերաբերյալ

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) -----------------------------------------------

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) պահպանել սահմանված ու նախագծային նորմերը

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) -----------------------------------------------------------------------------

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) -------

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) ------------------------------------------

9.7. այլ պահանջներ

| | | |
|---|---|---|
| 10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը | ____________------------____________ |
| 11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները | ____________------------____________ |
| 12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ | Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ |
| 12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում | (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.2. (*) էլեկտրամատակարարում | (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.3. (*) գազամատակարարում | ____________ (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը | Կցվում է ____________ (համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների) |
| 12.5. թույլ հոսանքներ | ____________ |
| 12.6. աղբահանություն | |
| 13. Տարածքի ինժեներական նախապատրաստում | (ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները) |
| 14. Բարեկարգում | _ապահովել հարակից տարածքի մաքրությունը, կանաչապատումը, բարեկարգումը (լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն) |
| 15. Շինարարական նյութեր | Քար,Երկաթ/բետոն, կոպտատաշ_քարե շար, մետաղ, ապակի, փայտ , ավազ, թիթեղ և այլն՝ըստ համաձայնեցված նախագծի____________ (շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ) |
| 16. Պաշտպանական կառույցներ | շինարարության ընթացքում ցանկապատել տարածքը և ստեղծել անհրաժեշտ այլ պաշտպանական միջոցներ____________ (արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները) |
| 17. Հակահրդեհային պահանջներ | ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները) |
| 18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ | ____________ |
| 19. Շրջակա միջավայրի պահպանում | *չիրականացնել վտանգավոր միջոցառումներ, որը կթողնի բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա, ըստ գործող նորմերի*____________ |

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

*Ճանապարհի երթևեկելի մասում չստեղծել երթևեկությանը խոչընդոտ հանդիսացող պայմաններ*

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

*«Աշխատանքային նախագիծ», ------- (3) ամիս*

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

________________________________________

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 660 որոշման պահանջների համաձայն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

*նախագիծը համաձայնեցնել ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքապետարանի հետ և ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման անհրաժեշտության դեպքում պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) __________ հետ՝ մինչև նախագծային աշխատանքներն սկսելը*

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

________________________________________

27. Այլ պայմաններ

________________________________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ __________ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 75-Ա

### ԱՐՏՈՒՇ ՎԱԶԳԵՆԻ ՀՈՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԹԵՂՈՒՏ, 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 5/3 ԽԱՆՈՒԹ ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ « Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածով , ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման 8-րդ, 11-րդ, 13-րդ կետերով և հաշվի առնելով, որ նշված ինքնակամ կառուցված շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ և պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ » ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը՝ որոշում եմ.

1. Օրինականացնել Արտուշ Վազգենի Հորոսյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող, 2021 թվականին կառուցված, ՀՀ կադաստրի կոմիտեում 2022PN4CVM ծածկագրով հաշվառված, ՀՀ Լոռու մարզ, Շնող համայնք, գյուղ Թեղուտ, 1-ին փողոց, 5/3 խանութ հասցեի հողամասում (ծածկ.՝ 06-037-0013-0021) ինքնակամ կառուցված խանութը (ավարտվածության աստիճանը՝ 50-80%)՝ 147 ք.մ արտաքին մակերեսով :
2. Նշված շինության օրինականացման համար ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման 13-րդ կետի համաձայն սահմանել վճար՝ 218442 (երկու հարյուր տասնութ հազար չորս հարյուր քառասուներկու) ՀՀ դրամի չափով /վճարումը կատարվում է Շնողի համանքապետարանի 900265146291 հաշվեհամարին:
3. Սույն որոշման 2-րդ կետով սանմանված վճարը ինքնակամ կառույցը իրականացրած անձանց /անձի/կողմից 60/վաթսուն/ օրյա ժամկետում չկատարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած
4. Նշված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:
5. Նշված շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
Հիմք՝ Ա. Հորոսյանի դիմումը, սեփ. վկայականի պատճենը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ » ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծերը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. _______________ _____
գ.Շնող

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 76-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԵՔԻԱԹ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի՝ **որոշում եմ.**

1.ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքային «Շնող համայնքի «Հեքիաթ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2022 թվականի մայիսի 12-ին՝ ժամը՝ 12:00-ին ,անցկացնել մրցույթ:

2.Հաստատել Շնողի համայնքային «Շնող համայնքի «Հեքիաթ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթի անցկացման հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3.ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքապետարանի աշխատակազմին՝ սահմանված կարգով իրականացնել մրցույթի նախապատրաստական աշխատանքները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ________________ _____
գ.Շնող

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի
2022 թվականի ապրիլի 12-ի N 76-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

**«Շնող համայնքի «Հեքիաթ »մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի.**

1.Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն գործունակ քաղաքացիները ովքեր ունեն՝

1) բարձրագույն կրթություն.

2)հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշման 9-րդ կետով սահմանված պահանջները.

3) իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն՝

1 ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

2)«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

3) Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգիրք»

4) «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

5) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.

6) «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

1.1. *Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝*

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3)համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն.

5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

2.Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը (նյութերը).

1) դիմում.

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

3)քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.

4) ինքնակենսագրություն.

5)անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.

6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

*Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:*

*3.* Մրցույթը կանցկացվի ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքապետարանի շենքում (հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Շնող, գյուղ Շնող, փողոց 2, շենք 4/3), *2022 թվականի մայիսի 12-ին, ժամը 12:00-ին:*

4 .Դիմումներն ընդունվում են Շնողի համայնքապետարանի աշխատակազմում հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Շնող, գյուղ Շնող, փողոց 2, շենք 4/3 , հեռ.՝ 077 60-81-20 ), ժամը 10:00-ից 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիներին ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքապետարանը կապահովի հարցաշարերով և միաժամանակ կտրամադրի այն իրավական ակտերի ցանկը, որոնցից կազմված կլինի հարցազրույցի փուլի համար նախատեսված հարցաշարը

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ *2022 թվականի մայիսի 2-ը՝ ժամը 18:00-ն :*

ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 77-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ՇՆՈՂ 06-088-0019-0007 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 4-րդ մասի, 43-րդ հոդվածի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի «ՀԱՍՏԱՏՎԱԾ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ (ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ) ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30 - Ի N 479 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 828-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի 31032022-06-0073 գրանցման վկայականը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի համայնք, գյուղ Շնող, 06-088-0019-0007 ծածկագրի 0.095615 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել գյուղատնտեսական խոտհարք նշանակության հողամասի
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում
3. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը և փոփոխված գործառնական նշանակության համապատասխան օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը
4. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում և սույն

որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ________________ _____

գ.Ծնող

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 78-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 22-րդ ենթակետով, 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29-12-2005 թվականի 2387 Ն որոշմամբ՝ **որոշում եմ**.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի Շնող բնակավայրի կադաստրային քարտեզի 06-088-0053-0013-001 ծածկագրի անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Շնող համայնք, Շնող բնակավայր, փողոց 1, շենք 55, բնակարան 1 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ________________ ____
գ.Շնող

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 79-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 22-րդ ենթակետով, 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29-12-2005 թվականի 2387 Ն որոշմամբ` **որոշում եմ**.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքիԹեղուտ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-037-008-000005 ծածկագրի 0,423 հա հողամասին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Շնող համայնք, Թեղուտ բնակավայր, փողոց 2, հողամաս 28 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ`** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ________________ _____
գ.Շնող

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 80-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 22-րդ ենթակետով, 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29-12-2005 թվականի 2387 Ն որոշմամբ՝ **որոշում եմ**.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի Թեղուտ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-037-007-000002 ծածկագրի 0,247 հա հողամասին և նրա վրա գտնվող անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Շնող համայնք, Թեղուտ բնակավայր, փողոց 2, փակուղի 5, թիվ 11 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ________________ _____
գ.Շնող

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 81-Ա

## ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով՝ **որոշում եմ.**

1. 2022 թվականի ապրիլի 15-ին՝ ժամը՝ 17-30-ին , Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի համայնքապետարանում գումարել ավագանու հերթական նիստ՝ հետևյալ օրակարգով.

1) «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու՝ 15 ապրիլի 2022 թվականի թիվ 4 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին
2) ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին
3) ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու՝ 27 դեկտեմբերի 2021 թվականի թիվ 90-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
4) գնված գույքը ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքապետարանի գույքացանկ մուտքագրելու և գույքագրման նոր փաստաթղթերը հաստատելու մասին
5) Անհատույց օգտագործման իրավունքով ՀՀ Լոռու մարզի «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ին գույք ամրացնելու մասին
6) Անհատույց օգտագործման իրավունքով ՀՀ Լոռու մարզի «Շնող համայնքի «Հեքիաթ» մանկապարտեզ » ՀՈԱԿ-ին գույք ամրացնելու մասին
7) ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի Շնող բնակավայրի վարչական տարածքում գտնվող 06-088-00267-0002 ծածկագրի հողամասից առանձնացվող 0,01315 հա հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին
8) Շնող համայնք, գյուղ Շնող , 12-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 2 հասցեում գտնվող անշարժ գույքի զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու , հողամասի սահմանները հաստատելու , կադաստրային քարտեզում տեղադրելու, կադաստրային քարտեզում հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները ուղղելու- հաստատելու մասին
9) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված կիսակառույց անասնաշենքի նկատմամբ Շնող համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու, օրինականացնելու և փոստային հասցե տրամադրելու մասին
10) ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու ՝ 01 փետրվարի 2022 թվականի թիվ 18-Ա որոշման 3-րդ հավելվածում փոփոխություն կատարելու մասին
11) Առանձին անձանց հողի հարկի և գույքահարկի տույժերից ազատելու մասին
12) Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ____________ **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. _______________ _____
գ.Շնող

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 82-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԵՂՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ՝ ՓՈՂՈՑ 2, ԹԻՎ 4 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԿԵՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման 7-րդ գլխի 147-րդ կետով՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետություն ,Լոռու մարզ, համայնք Շնող , գյուղ Թեղուտ, փողոց 2, թիվ 4 հասցեի ավտոլվացման կետի կառուցման աշխատանքների ավարտական ակտի ընդունման համար ստեղծել հանձնաժողով՝  հետևյալ կազմով՝
Հանձնաժողովի նախագահ՝ Դավիթ Ղումաշյան - Շնող համայնքի ղեկավար
Հանձնաժողովի քարտուղար՝ Հեղինե Ճիճիյան - Շնողի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
անդամներ՝
1) ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Լոռու տարածքային բաժնի գլխավոր մասնագետ Աշոտ Նալբանդյան
2) ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Լոռու տարածքային բաժնի ավագ մասնագետ Սահակ Ավագյան
3) Սամվել Մկրտումյան -համայնքի ղեկավարի տեղակալ,
4)Ֆրունզե Նորեկյան -Թեղուտ բնակավայրի վարչական ղեկավար
5) Վարդան Մատինյան- «Վարդան Մատինյան Գեղամի» ԱՁ, տնօրեն, շինարարությունն իրականացնող կազմակերպության ներկայացուցիչ
6)Դավիթ Մարգարյան - «ԴՎՄ» ՍՊԸ տնօրեն, տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության ներկայացուցիչ
7) Ս. Էդարյան - «ՄԱՐԳԱՐՅԱՆԲԻԼԴԻՆԳԳՐՈՒՊ», ՍՊԸ,տնօրեն հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության ներկայացուցիչ
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. _______________ _____
գ.Շնող

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 83-Ա

### ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-088-0267-0002 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ՝ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածով ՀՀ «Հողային օրենսգրքի» 3-րդ, 10-րդ, 52-րդ, 53-րդ հոդվածներով , ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով», ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թվականի N 698-Ն որոշմամբ հաստաված կարգով, Հիմք ընդունելով սեփականության թիվ 16122021-06-0062 վկայականը, կադաստրի կոմիտեի կողմից 12/04/2022 թվականին տրված ՄՏ-12042022-06-0499 միասնական տեղեկանքը՝ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի վարչական սահմանում գտնվող 06-088-0267-0002 ծածկագրով հողամասի գործառնական նշանակությունը կադաստրային քարտեզում փոփոխել որպես գյուղատնտեսական վարելահող
2. Հաստատել Շնող համայնքի վարչական սահմանում գտնվող 06-088-0267-0002 ծածկագրով հողամասի գործառնական նշանակությունը գյուղատնտեսական վարելահող
3. Նշված սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. _______________ ____
գ.Շնող